Նախագահ
Սյուզան Հ. Փորթեր
Երեխաների միության գերագույն նախագահ

ՈՒԽՏԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագահ Նելսոնն ուսուցանել է, որ Երկնային Հայրը հատուկ սեր է տածում նրանց հանդեպ, ովքեր ուխտեր են կապում Իր հետ:* Երբ մենք մկրտվում ենք և հաստատվում՝ խոստանում ենք Նրան լինել նվիրված ու հավատարիմ: Նա նույն խոստումն է տալիս մեզ:

ԸՆԿԵՐ ԼԻՆԵՆՔ «ԸՆԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻՆ

Ձեր շնորհիվ շատ բան կարող է փոխվել

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը շատ են սիրում ձեզ: Նրանք հրավիրում են ձեզ ուխտեր կամ խոստումներ կապել Իրենց հետ, քանի որ սիրում են ձեզ, : Դուք սկսում եք կապել այդ խոստումները, երբ մկրտվում եք:

Ձեր մկրտությունից հետո դուք ստանում եք Սուրբ Հոգու պարգևը: Դուք դառնում եք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Դա նշանակում է, որ Երկնային Հայրը վստահ է, որ դուք կպահեք ձեր ուխտերը:

Որպես Եկեղեցու լիիրավ անդամ՝ ի՞նչ կարող եք անել ձեր ուխտերը պահելու համար: Դուք կարող եք ողջունել մյուսներին Երեխաների միությունում: Դուք կարող եք նստել նորեկի կողքին և օգնել նրան սովորել երգերը: Դուք կարող եք օգնել Երեխաների միության միջոցառումների կազմակերպման հարցում: Դուք կարող եք նաև առաջնորդ լինել ձեր ընտանիքում: Դուք կարող եք խնդրել, որ ընտանեկան աղոթք ասվի կամ կիսվել Երեխաների միությունում ձեր սովորածով:

Սուրբ Հոգին ստանալուց հետո ուրիշների կարիքները կարող եք տեսնել նոր ձևով: Դուք կարող եք աղոթել Երկնային Հորը և ասել. «Օգնիր ինձ իմանալ, թե այսօր ում կարող եմ օգնել»: Այնուհետև Սուրբ Հոգին կօգնի ձեզ նկատել ինչ-որ մեկին, ով մենակ է նստած, կամ կհուշի, որ ողջունեք ընկերներից որևէ մեկին: Ձեր շնորհիվ շատ բան է փոխվում, երբ որոշում եք օգնել ուրիշներին: Դուք գործում եք որպես Երկնային Հոր Եկեղեցու անդամ:

Երկնային Հայրը սիրում է ձեզ: Նա ցանկանում է, որ դուք ձեր օրինակով առաջնորդեք, ուր էլ որ գնաք, որպեսզի կարողանաք մարդկանց մոտեցնել Իրեն: Բայց դուք չպետք է դա անեք ինքնուրույն: Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը երբեք չեն դադարի օգնել ձեզ: Դուք կարող եք վստահ լինել, իմանալով, որ Նրանք ձեզ հետ են: Դուք կարող եք պատկերացնել Հիսուսին՝ միշտ կանգնած ձեր կողքին: ●

Հատված Օլիվիա Քիթերմանի և Ռեյչել Փիթերսոնի հետ անցկացրած հարցազրույցից:

Ո՞ւմ կարող եմ օգնել այսօր:

Գրեք ձեր գաղափարները թղթե շղթայի վրա:



Ընկերների շղթա

1. Կտրեք-հանեք սպիտակ հատվածը դեպի աջ: Կամ ուրվագծեք նմուշը մեկ այլ թղթի վրա՝ կտրելու համար:



2. Գծերի երկայնքով ծալեք թուղթը հետ ու առաջ՝ հովհարաձև:
3. Կտրեք-հանեք մարդու ուրվագիծը:



4. Բացեք այն և կտեսնեք ձեռքերը բռնած ընկերների շղթա: Զարդարեք ընկերներին, որպեսզի նմանվեն այն մարդկանց, ում դուք սիրում եք:

ԱՄՈՒՆԵՐԸ ՋԱՐԴԱՐԵՔ ԲԵՔՈՒՆՆԵՐԻ

* «Հավիտենական ուխտը», *Լիահոնա,* հոկտ. 2022, 4-11: